## ՏԵՂԵԿԱՆՔԸ

## ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հոդված 130.1. ~~Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կամ~~ բուժաշխատողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը.

1. ~~Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կամ~~ բուժաշխատողների ~~օրինական~~ մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը, որը կատարվել է նրա նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով`

պատժվում է տուգանքով` նվազագույն աշխատավարձի երեք հարյուրապատիկից հինգ հարյուրապատիկի չափով:

2. ~~Նույն արարքը~~, Բուժաշխատողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը, որը կատարվել է նրա նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով`

պատժվում է կալանքով` մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ` երկուսից հինգ տարի ժամկետով»: